ԳԱՆՁ

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ

Յանձառ լուսոյն լոյս փառաց միածնի աշխարհիս առաքեալ անմահի Հօր անսահման զօրութիւն, որ ի վերնական իշխանութենացն միշտ երկրպագիս ֆերիստոս Աստուած, քեզ միայնոյ վայելէ օրհնութիւն ի բնաւից բանական կենդանեաց. որպէս միայնոյ փրկողի և առաքեալ ի ծոցոյ Հօր լուսոյ։ Ընկալ և զթա ի գինս պատուական քո արեանդ աղաչեմք։

Որ միայնոյ ես իմաստութիւն բան և լոյս ծագեալ ի Հօրէ համագոյ հզօրին, նկարագիր և պատկեր անեղին, որ յանէից յոչէից յեղեալութիւն ածեր ամենայն արարածս, սասացար քեզ սպասաւորս լուսեղէն զուարթնոցն զօրութիւնս. վերինս պատկեցեր լուսատրօք, և վերկիր յօրինեցեր ծաղկազարդ յօրինուածովք, ինքնազօր բանիւ քո բնակեալ ի լոյս անմատոյց։ Ընկալ, և այլն։

Վեցօրհնեալդ ի հրեղինաց՝ անշեղի օրհնէ երգութեամբ բարեբանեալդ ի բիւրուց սրբոց բանաց սերովբէից՝ ներքաւելիդ Աստուած, որ քոյին մարդանալովդ զգաստապարտութիւն ամենայ բարձրոց, գերկունս անիծիցն լուծեր, զդատաւկնիք յանցանացն ընդեցեր, զգիր պարտուրութեան գերեացն պատառեցեր, զմերկութիւն նախահօրն ծածկեցեր և զանէնցն արարածս ազատեցեր ի ծառայութենէ թշնամոյն։ Ընկալ, և այլն։

Անճառ իսկապէս լուսով ծանուցաք քոյոց ընտրելոցն, որով այսօր տեսանող լինել շնորհեցեր մեզ հայրենի փառօքդ փառաց թագաւոր, և զմահկանացուսն յանմահութիւն վերին զօրացն հանել խորհուրդ, յորում ահիւ յերերումանց քոց հրաշիցն հիացեալ զանազանեալին ոչ տեսանէր ծաւալումն։ Ընկալ, և այլն։

Նա և ի լերինն թաթխոլրական զանբաժանելի հանդիպէիս աստուածութեան քո ցուցեր, հանդերձելոց քոյմ պալատեանդ քարոզելով վերանելի մարգարէիդ, զմեծն Մովսէս լուսափայլ ամպովք վերացեր ի հողոյ, և զՀելիաս ի հրեղէն կառացն. յակնարկեալն առ քեզ կոչեցեր ի բարձանց, իշխան մահու և կենաց զքեզ միայն ծանուցեր, ՅԷր կենդանեաց և Աստուած մեռելոց, ուստի զարհուրեալ Պետրոսի անուանելով քոյմ ի մի յերկերէն ահիւ զանգիտել քեզ տէրունայդ յօրինէր տաղաւար։ Ընկալ, և այլն։

Նոր երգ քեզ նորահրաշ ի վերնական զօրութենէ վերապրածոյ ծնողի ձայն. և ի բարձանց հնչէր բարբառ հայրական՝ որպէս ըզքեզ զաւանեալ սիրելի, և հրաշալի Հոգոյն հովանի ամպով իջեալ առ համազոյակիցդ աստուածութիւնն յայտնէր և զմահկանացուսն վերականգնէր, զի և ի մեզ ներգործեացէ զիմանալի հրամանդդ զլոյս, այժմ և ի միասնամամ յաւուրն կենագործեալ ի նորոգումն աշխ բարձրելոյն։ Ընկալ, և այլն։

Երեւման քո փառաց աշխարհակեցոյց լուսոյդ լուսատու և հովանի յեր հզօր զօրութեամբ, հաւատակաց քոց հօտի հայրապետին մերոյ սրբութեան քոմմ պաշտօնէիդ, և հանգուցանեալ զգառինս ի վայելի գալարով, ի լերինն սրբութեան ի յուրս հանպատեան։ Ընկալ, և այլն։

Ակզբնաւորեա ի մեզ զսրբութեան քո վերկիդդ. հաստատեա ի վերոյ վիմի հաստատանոյ և սիրոյ ընդ սիրելեաց քոց աշակերտացն. ընդ Պետրոսի և ընդ որդւոցն Զեբեդեայ յիմանալի խորանին բերեալ. լուր պաղատանս նոցն մեզուցելոց քոց ծառայիցս, պատապատրեա ընդ ամբաձածուկ աչուիդ. յորոլայնէ յորոլայն երկրպագողին յաւաչելեաց մարգարէի և Մկրտչին Քրիստոնոս, նահատակու-

digitised by A.R.A.R.@

թեամբ տեսողին գգեղ սրբոյն Սահակայնոսի, որ է որդի և անդրանիկ փրկագործ կըրիցն երկրորդին Աղամայ՝ յառաջաբարեազի Սահակայնոսի. ինդրուածովք առաքելոց սրբոցն և մարգարէից, որոց այսօր յուշարձան եղեալ է տեսանել զանձինս ի սուրբ տաճարի Աստուածոյ։ Ընդ որս և մեք ի հոգևոր ուրախութեան ընդունելով զհիշատակս նոցա՝ ասեմք։ Ամէն։

ԸՆԴ ՀԱՅԱՍՏԱՆ ՌՈՒՍԻՈՑ

(Տես երես 255, շարունակութիւն).

4 Ցունիս. — Նախընթաց երեկոյին մրափքերնիս պրած էինք երկրորդ օրը այցելութիւն մը ընել՝ Ուշտուր չայի ձորոյն մէջ եղող Հաւիձոր բերդին, ու փարապանեան Մէլիք Սարգիս եղբարց ձեւարանին։ Այս խորհրդով ացաւօսը կանուխ՝ Նազարբէկովի ընկերակցութեամբ, որ մեր առաջորդն էր, ճամբայ ելանք ձիով։

Երկու ժամ ճամբայ ընելէն ետք՝ հասանք, ու սիրալիր ընդունելութեամբ մեծարուեցանք այն պարոններէն, որ Շահտոի ընծայեցին եղջերուի և վայրի այծեմանց որոյ փառաւոր ջարդ մը, որովհետև այն գերազանցապէս որոյ յատուկ այդ երկրին մէջ՝ սովորական այծերէն աւելի բազմաթիւ են վայրենի ոչխարները։ — Չալիձոր՝ մեր այս արշաւանաց նպատակն, հանքատեղւոյն գիմացն ե. ղող բլրոյ մը կատուցած ամրոց մ՚է, զեռէն գրեթէ երկու հարիւր մետր ուղղորդ բարձր։ Ներդ ճամբով մը վեր ելնելով, երեսունը հինգ վայրկենէն կը հասնինք բերդին պատնիշաց առջևները։

Պարսպէն դուրս անմիջապէս փոքրիկ գեղ բեզմանական մատուռ մը կը նկատենք, որ տաքին երեսով զարդարուած խաչերով և ամենահին արձանագրութեամբք. Թզենեաց և վայրի վարդենեաց մէջ գեղեցկապես բարձրացած ու հիմայ աւերակ, ուր վայրի աղաւնեակք միայն կրնան մուտ գործել, որովհետև գուռը ծրած է բերդին շրջապատն ե. ղող մեծ պարիսպ՝ քառակուսի է, և չորսէն հինգ հարիւր մետր երկայնութիւն ունէր։ Դէպ ի հիւսիսային արևմտեան՝ քանի մի տասնեակ չինուած կան. և ի միջակայրին՝ հողակերտ կամարապատ նեբքնատուն։ Այս ընդարձակ և բազմաթիւ սրահք, որ հիմայ հովուանոց և ոչխարաց փարախ եղած են, վերաբերութիւն ունէին ամրոցին և կերդեցւոյն հետ, որոյ բուն կամարին վրայ զանգակատուն մը չինուած է, որպէս ի Ցաթեւ։ Դասին մէջ գեռ ևս կը տեսնուին հետք որմնանկար պատկերաց սրբոց ոմանց և եպիսկոպոսաց։ Ամրոցին չինութիւն վերջատան կամ եօթնեստասնեբորդ դարուն կը պատկանի. և ժամանակ միայն հետու՝ ուրիշ վանք մ՚ալ կայ կ՚ըսեն, տասներորդ դարու շինութիւն։ բայց այ աւելի առաջ երթալու այժ չտեսնելով վրանիս, 34° ջերմութեամբ գէպ ի Գառաբ կը զարձընենք մեր երիվարաց սանձերը։

Դանդաղաքայլ կը յառաջեմ գէպ ի ձուլարան, ծանր ու խղդուկ օդոյն ջերմութենէն նեղուելով. մերթ գետնզրէն և մերթ հովատատուր ծառոց տակէն՝ երիվարիս ուզած և առանպատած ճամբովը, որովհետև սաստիկ ջերմամբ ալ կը նեղուիմ։ գիանի մի ժամ հանգչելով, կըցայ երթալ ի ձուլարան։

Գատարի հանքը պղնձի հարուստ հրաբխոյ ձևացած է։ վեց անգամ անընդմիջապար իրարու ետևէ կսակի վրայ հաւնցընելէն ու

digitised by A.R.A.R.@